

| Համարը<br>Տիպը<br>Սկզբնաղբյուրը                 | N 116-Ն<br>Հրաման<br>ՀՀԳՏ 2011.12.19/28(411).1<br>Հոդ.411.19 | Տեսակը<br>Կարգավիճակը<br>Ընդունման վայրը       | Մայր<br>Գործում է<br>Երևան |
|---|--|--|----------------------------|
| Ընդունող մարմինը                                | Արտակարգ իրավիճակների<br>նախարար                             | Ընդունման ամսաթիվը                             | 11.11.2011                 |
| Ստորագրող մարմինը                               | Արտակարգ իրավիճակների<br>նախարար                             | Ստորագրման ամսաթիվը                            | 11.11.2011                 |
| Վավերացնող մարմինը<br>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը | 29.12.2011   | Վավերացման ամսաթիվը<br>Ուժը կորցնելու ամսաթիվը |                            |

*«Գրանցված է»*  
ՀՀ արդարադատության  
նախարարության կողմից  
30 նոյեմբերի 2011 թ.  
Պետական գրանցման թիվ 32611498

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

11 նոյեմբերի 2011 թ.  
ք. Երևան

N 116-Ն

## Հ Ր Ա Մ Ա Ն

**ՓՐԿԱՐԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ, ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿԻ, ՓՐԿԱՐԱՐԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ,  
ԱՐՅԱՆ ԽՄԲԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՇՈՒՄՈՎ ՄԵՏԱՂՅԱ ԺԵՏՈՆԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՁԵՎԵՐԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
14-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան.

## *Հրամայում եմ՝*

1. Հաստատել՝

1) փրկարարի վկայականի կանոնադրությունը, ձևը և տրման կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) փրկարարի գրքույկի կանոնադրությունը, ձևը և տրման կարգը՝ համաձայն հավելված 2-ի.

3) փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնի կանոնադրությունը, ձևը և տրման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Գրիգորյանին՝ ապահովել սույն հրամանի ներկայացումը՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա. Երիցյան**

**ՓՐԿԱՐԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ՁԵՎԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**I. ՓՐԿԱՐԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Փրկարարի վկայականը նախատեսված է փրկարարական պատրաստություն և կարգ ունեցող փրկարարին համապատասխան կոչում և պատրաստություն չունեցող, սակայն փրկարարական աշխատանքների մասնակցող քաղաքացիներից տարբերելու, անհրաժեշտության դեպքում փրկարարի մասին տեղեկություններ ստանալու համար:

2. Փրկարարն իր պարտականությունների կատարման ժամանակ վկայականը պետք է կրի արտահագուստի վրա՝ երևացող մասում:

3. Փրկարարի վկայականը չի փոխարինում անձը հաստատող փաստաթղթին:

4. Փրկարարի վկայականը պատվիրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից:

**II. ՓՐԿԱՐԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԸ**

5. Փրկարարի վկայականի առաջին երեսի ձևն է՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**REPUBLIC OF ARMENIA**

---

ՓՐԿԱՐԱՐ
RESCUER

---

ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ N \_\_\_\_\_  
IDENTITY CARD

Ա.Ա. \_\_\_\_\_  
N.S. \_\_\_\_\_

ՑՈՒՑԱՐԵՐԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ  
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ  
RENDER ASSISTANCE TO ALL CITIZENS  
AND AUTHORITIES

Տրված է \_\_\_\_\_  
Given by \_\_\_\_\_  
• \_\_\_\_\_  
• \_\_\_\_\_  
(Ստորագրություն) (Signature)  
\_\_\_\_\_  
(Անձն. ստորագրություն) (P.S.)  
\_\_\_\_\_

Կ.Տ. Stamp place

6. Փրկարարի վկայականի երկրորդ երեսի ձևն է՝

Անձնական  
Personal N \_\_\_\_\_

---



---



---

Ծննդյան թվականը  
Birth date \_\_\_\_\_

Հասակը \_\_\_\_\_ Աչքերը \_\_\_\_\_  
Height \_\_\_\_\_ Eyes \_\_\_\_\_

Մազերը \_\_\_\_\_ Արյան խումբը \_\_\_\_\_  
Hair \_\_\_\_\_ Blood group \_\_\_\_\_

Այլ հատուկ նշաններ և տվյալներ  
Any special notes and information \_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Ձեռքի առկայությունը  
Arms availability \_\_\_\_\_

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏԵՐԸ ԳՏԵՎՈՒՄ Է 1949Թ.  
ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԺՆԵՎՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆԵՐԻ ԵՎ  
1949Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ԺՆԵՎՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆԵՐԻՆ  
ԿԻՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.)

OWNER OF THIS IDENTITY CARD IS BEING UNDER  
DEFENSE OF GENEVE CONVENTION FROM AUGUST, 12,  
1949 AND SUPPLEMENTARY REGISTRATION ADVERSE  
GENEVE CONVENTION FROM AUGUST, 12, 1949.  
(REGISTRATION 1)

7. Վկայականի ընդհանուր ֆոնը լինում է բաց մոխրագույն:

8. Վկայականի` առաջին երեսի վերին մասում` որտեղ գրված է «ՓՐԿԱՐԱՐ», «СПАСАТЕЛЬ» և «RESCUER» բառը, երկրորդ երեսին, ամբողջ երկարությամբ վերևից 12մմ ցած, 10մմ լայնությամբ, լինում է Հայաստանի Հանրապետության պետական դրոշմը, որի կենտրոնում սպիտակ շրջանակի մեջ, դարչնագույն ֆոնի վրա քաղաքացիական պաշտպանության միջազգային նշանը` կապույտ հավասարակողմ եռանկյուն:

### **III. ՓՐԿԱՐԱՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

9. Փրկարարի վկայականը տրվում է որակավորող հանձնաժողովի կողմից, փրկարարի կարգավիճակ շնորհելիս` փրկարարի երդում տալուց հետո:

10. Փրկարարի վկայականը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

11. Փրկարարի կարգավիճակից զրկվելու դեպքում վկայականը հանձնվում է որակավորող հանձնաժողովին, որն այն ոչնչացնում է:

**ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ՁԵՎԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**I. ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Փրկարարի գրքույկը նախատեսված է փրկարարի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, փրկարարական աշխատանքների մասնակցության մասին գրանցումներ կատարելու համար:

2. Փրկարարի գրքույկը չի փոխարինում անձը հաստատող փաստաթղթին:

3. Փրկարարի գրքույկը պատվիրվում է լիազոր մարմնի կողմից:

**II. ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿԻ ՁԵՎԸ**

4. Փրկարարի գրքույկի չափերն են՝ 85x125 մմ:

5. Գրքույկի շապիկը լինում է մուգ կապույտ գույնի, իսկ էջերը բաց մոխրագույն:

6. Փրկարարի գրքույկի տեսքը տրված է «Փրկարարի գրքույկի կանոնադրությանը, ձևին և տրման կարգին» կցվող Ձևում:

7. Փրկարարի գրքույկում ամրագրվում են «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փրկարարի իրավունքները և պարտականությունները:

**III. ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

8. Փրկարարի գրքույկ տրվում է որակավորող հանձնաժողովի կողմից փրկարարի կարգավիճակ շնորհելիս՝ փրկարարների գրանցամատյանում գրանցում կատարելուց, փրկարարին անձնական կարգ շնորհելուց և փրկարարի երդում տալուց հետո:

9. Գրքույկը փրկարարը ստանում է ստորագրությամբ, որակավորում անցնելուց մեկ ամսից ոչ ուշ:

10. Փրկարարի կարգավիճակից զրկվելու դեպքում փրկարարի գրքույկում որակավորող հանձնաժողովի կողմից կատարվում է համապատասխան գրառում:

Փրկարարի գրքույկի կանոնադրությանը,  
ձևին և տրման կարգի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**



**ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿ**

**REPUBLIC OF ARMENIA  
RESCUER PASSPORT**

**Փրկարարի գրքույկի լրացման կարգը**

1. Փրկարարի գրքույկում բոլոր գրառումները կատարվում են գրչով և վավերացվում են գրառում կատարողների ստորագրություններով և կնիքներով:
2. «Գործունեության տեսակների սահմանափակում» բաժնում նշվում են, թե փրկարարը փրկարարական աշխատանքների որ տեսակներով իրավունք չունի զբաղվելու:
3. «Հատուկ նշումներ» սյունակում գրառումներ են կատարվում կառավարական պարզկներով պարզկատրվելու, որակավորումից հրաժարվելու մասին:
4. Փրկարարի գրքույկի պատրաստման ժամանակ «Մասնակցությունը փրկարարական աշխատանքների» բաժնի ծավալը անհրաժեշտության դեպքում կարող է մեծացվել:

**ՑՈՒՑԱԲԵՐԵԼ ԱՄԵՆԱՅՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Համաձայն «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի սույնը ներկայացնողն իրավունք ունի՝

1. Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներում ընդգրկված փրկարարն աշխատանքների կատարման վայր մեկնելու նպատակով իրավունք ունի արտահերթ ձեռք բերելու տրանսպորտի բոլոր տեսակներով երթևեկելու տոմսեր:

2. Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների ժամանակ փրկարարն իրավունք ունի՝

1) ստանալու իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն՝ իր իրավասությունների շրջանակներում.

2) պահանջելու արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից պահպանել անվտանգության կանոնները.

3) արտակարգ իրավիճակի վայրում մուտք գործելու բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ.

4) մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքում օգտագործելու արտակարգ իրավիճակի վայրում գտնվող կապի, տրանսպորտի և նյութական այլ միջոցներ՝ հետագա համարժեք փոխհատուցման պայմանով.

3. Արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքներին մասնակցող փրկարարն ունի հատուկ սննդով ապահովման, բժշկական և հոգեբանական վերականգնման իրավունք:

4. Փրկարարը պարտավոր է՝

1) որոնել և միջոցներ ձեռնարկել մարդկանց փրկության ուղղությամբ.

2) պատրաստ լինել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների իրականացմանը, ցույց տալ առաջին բժշկական օգնությունը.

3) կատարելագործել իր ֆիզիկական, մասնագիտական, բժշկական, հոգեբանական պատրաստականությունը.

4) կատարելագործել փրկարար ուժերի կազմում իր գործելու ունակություններն ու հմտությունները.

5) պահպանել փրկարարական աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները.

6) անվերապահորեն կատարել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների ժամանակ իր կազմավորման ղեկավարի հրամանները.

7) բնակչությանը բացատրել արտակարգ իրավիճակների ժամանակ անվտանգ գործելակերպի կանոնները՝ արտակարգ իրավիճակների առաջացումը բացառելու նպատակով.

8) հավատարիմ մնալ փրկարարի երդմանը:



ՓՐԿԱՐԱՐԻ ԳՐՔՈՒՅԿ

սերիա

համար

ազգանուն

անուն, հայրանուն

հանդիսանում է \_\_\_\_\_ կարգի փրկարար



1. Ծննդյան օրը, ամիսը, տարին և վայրը

\_\_\_\_\_

2. Անձնական ստորագրություն

3. Սկզբնական որակավորման անցկացումը

Հանրապետական որակավորման հանձնաժողով  
ստորագրություն \_\_\_\_\_ ամսաթիվ \_\_\_\_\_

Անձը հաստատող փաստաթուղթ \_\_\_\_\_  
տեսակը \_\_\_\_\_

սերիա \_\_\_\_\_ համար \_\_\_\_\_

ում կողմից է տրված

Գործունեության տեսակների սահմանափակում

Limitation of activity types

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Արյան խումբ \_\_\_\_\_

Blood group

Հատուկ նշաններ \_\_\_\_\_

Special signs

Ատամների բանաձև \_\_\_\_\_

Teeth form

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

## SHOW ALL-ROUND ASSISTANCE

According to the law of the Republic of Armenia on «Rescue forces and status of rescuers» the holder of this passport has a right:

1. The rescuer involved in the emergencies prevention, possible consequences reduction and elimination operations has a right of obtaining of all transport means tickets in order to arrive to the rescue operations place.

2. During the implementation of the emergencies prevention, possible consequences reduction and elimination operations the rescuer has a right:

a) Receive necessary complete and correct information for carrying out their duties within the frames of their responsibilities.

b) To require all the persons in disaster zone to maintain all security rules.

c) To have a free access to the dwelling and industrial territories and organizations in disaster zone.

d) To use the communication, transportation and other material means in disaster zone in case of necessity and for life rescuing with further equivalent reimbursement.

3. Rescuers involved in emergencies prevention, possible consequences reduction and elimination operations have the right of special food provision, medical and psychological rehabilitation. The rescuer is obliged:

a) To search and undertake measures to rescue people,

b) To be ready for providing first medical assistance during the implementation of the emergencies prevention, possible consequences reduction and elimination operations.

c) To enhance their physical, professional, medical, psychological obligations,

d) To enhance the working abilities and skills in rescue forces formations.

e) To keep the security rules during rescue operations implementation.

f) To immediately carry out orders of the heads of their formations during the emergencies prevention, possible consequences reduction and elimination operations.

g) To explain the rules of safe operations to the population during emergencies for disaster prevention.

h) To remain faithful to the rescuers oath.

The passport is valid in all countries.

10. Հատուկ նշումներ/Special remarks

5. Տիրապետում է հետևյալ մասնագիտությունների

Is a master of the following skills

---

---

---

---

---

---

---

---



Արձանագրություն N \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_  
Protocol Date

Շնորհվել է որակավորում \_\_\_\_\_  
Is awarded gualification

Հանձնաժողովի նախագահի ստորագրություն/Signature of the Commission chairman

\_\_\_\_\_  
Կ.Տ./STAMP

Արձանագրություն N \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_  
Protocol Date

Շնորհվել է որակավորում \_\_\_\_\_  
Is awarded gualification

Հանձնաժողովի նախագահի ստորագրություն/Signature of the Commission chairman

\_\_\_\_\_  
Կ.Տ./STAMP

Արձանագրություն N \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_  
Protocol Date

Շնորհվել է որակավորում \_\_\_\_\_  
Is awarded gualification

Հանձնաժողովի նախագահի ստորագրություն/Signature of the Commission chairman

\_\_\_\_\_  
Կ.Տ./STAMP

Արձանագրություն N \_\_\_\_\_ Ամսաթիվ \_\_\_\_\_  
Protocol Date

Շնորհվել է որակավորում \_\_\_\_\_  
Is awarded gualification

Հանձնաժողովի նախագահի ստորագրություն/Signature of the Commission chairman

\_\_\_\_\_  
Կ.Տ./STAMP

9. Բժշկական տեղեկություններ/Medical inforamtions

Որոշ դեղորայքի բացասական ազդեցություն

Adverse effect do the some medicianes

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Կատարած պատվաստումները, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների



**ՓՐԿԱՐԱՐԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ, ԱՐՅԱՆ ԽՄԲԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՇՈՒՄՈՎ  
ՄԵՏԱՂՅԱ ԺԵՏՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՁԵՎԸ ԵՎ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**I. ՓՐԿԱՐԱՐԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ, ԱՐՅԱՆ ԽՄԲԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՇՈՒՄՈՎ  
ՄԵՏԱՂՅԱ ԺԵՏՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնի պատրաստումն ու տվյալների փորագրումը կատարվում է փրկարարների որակավորող հանձնաժողովի ներկայացմամբ՝ լիազոր մարմնի պատվերով:

2. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը փրկարարի վկայականին չի փոխարինում:

3. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը նախատեսված է փրկարարին դժբախտ պատահարների ժամանակ առաջին բուժօգնություն ցուցաբերելու, նրա մասին տեղեկություններ ստանալու և մահվան դեպքում նրա ճանաչման հնարավորության համար:

4. Փրկարարն իր պարտականությունների կատարման ժամանակ Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը պետք է կրի մարմնի վրա՝ ձեռքին կամ վզին կախված մետաղյա շղթայով:

**II. ՓՐԿԱՐԱՐԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ, ԱՐՅԱՆ ԽՄԲԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՇՈՒՄՈՎ  
ՄԵՏԱՂՅԱ ԺԵՏՈՆԻ ՁԵՎԸ**

5. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը չժանգոտվող մետաղից է, ուղղանկյուն ձևով՝ կլորացված անկյուններով:

6. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնն ունի հետևյալ չափերը՝ երկարությունը կենտրոնական մասում - 50մմ, լայնությունը - 25մմ, հաստությունը - 1.5մմ՝



7. Փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնի առաջին երեսին հայերեն լեզվով փորագրված է՝

- 1) 1-ին տողում - «ՀԱՅԱՍՏԱՆ» բառը.
- 2) 2-րդ տողում - «փրկարար» բառը.
- 3) 3-րդ տողում - փրկարարի ազգանունը.
- 4) 4-րդ տողում - փրկարարի անունը, հայրանունը.
- 5) 5-րդ տողում - փրկարարի արյան խումբը.

6) 6-րդ տողում - որակավորող հանձնաժողովի հաշվառման մատյանում գրանցված փրկարարի հաշվառման անձնական կարգը

8. Ժետոնի երկրորդ երեսին փորագրվում են սույն կանոնադրության, ձևի և տրման կարգի 7-րդ կետում նշված տվյալները՝ անգլերեն լեզվով:

### **III. ՓՐԿԱՐԱՐԻ ԱՆՎԱՆ, ԱԶԳԱՆՎԱՆ, ԱՐՅԱՆ ԽՄԲԻ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՆՇՈՒՄՈՎ ՄԵՏԱՂՅԱ ԺԵՏՈՆԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

9. Փրկարարին **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը տրվում է որակավորող հանձնաժողովի կողմից՝ փրկարարի կարգավիճակ շնորհելիս, փրկարարների գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելուց, փրկարարին հաշվառման անձնական կարգ շնորհելուց և փրկարարի երդում տալուց հետո:

10. **Անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը փրկարարը ստանում է ստորագրությամբ, որակավորում անցնելուց մեկ ամսից ոչ ուշ:

11. Փրկարարի կարգավիճակից զրկվելու դեպքում փրկարարի **անվան, ազգանվան, արյան խմբի և անձնական կարգի նշումով** մետաղյա ժետոնը հանձնվում է որակավորող հանձնաժողովին, որն այն ոչնչացնում է: